

334.6

L-27

9825

Գրուեաւորներ բոլոր յերկրների, միացե՛ք!

ԼԱՅԱՐԻՍ

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ռուսերենից քարգմանեց  
Լ. ԱԴԱՄՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԻՖԼԻՍԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ «ԿՈՒՍՏԿՐԵԴԻՏ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս  
1929

3346  
L-27

ԼԱՑԱՐԻՍ

8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՁԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1005  
29346

Ռուսերենից թարգմանեց  
Լ. ԱԳԱՄՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՔԻՖԼԻՍԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ԿՈՈՊԵՐԱՑԻԱ «ԿՈՒՍՏԿՐԵԴԻՏ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ



2001

Ի Ֆ Լ Ի Ս  
1929.

2010

7981 ւե

### ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ

Մեզ մոտ Անդրկովկասում, ինչպես այս գրքի մեջ հեղինակը ևս հիշում է Ազգային Հանրապետությունների ու Ծայրագավառների մասին խոսելիս, սնայնագործական արդյունաբերությունը գրավում է բացառիկ տեղ ժողովրդական տնտեսության մեջ: Նրա արտադրությունը քանակի և արժեքի տեսակետից զգալի տեղ է բռնում համեմատած Պետարդյունաբերության հետ: Պարզ է ուրեմն, վոր մենք այստեղ ունենք աչքի ընկնող քանակությամբ մի այլ աշխատավոր դասակարգ և՛ Տնայնագործ-արհեստավորներ:

Տնայնագործ-արդյունաբերական կոոպերացիան, վոր մեզ մոտ, դեռ ևս ջանել՝ յերեք—չորս տարվա պատմություն ունեցող մի հիմնարկություն է, իր ձեռքն է վերցրել սնայնագործ-արհեստավորների կազմակերպման խնդիրը: Նա միացրել է արտելների ու ընդհանուր արհեստանոցների միջոցով մեծ քանակությամբ սնայնագործներ և վարկային արդյունաբերական ընկերություններում կոոպերացման է յենթարկել, վոչ պակաս քանակությամբ, ինքնաշխատ արհեստավորներ:

Տնայնագործ - արդյունաբերական կոոպերացիան, մեզ մոտ, սկսել է իր աշխատանքները սուղ նյութական միջոցներով ու սկզբում չի ունեցել ուրիշ տեղից բավականաչափ զբամական ոժանդակություն և վարկեր: Այս պայմաններում նա չէր կարող, իհարկե, չնայած իր թափած հսկայական ճիգերին, միանգամից ընդգրկել տնայնագործությունից բոլոր պահանջները՝ հում նյութերի մատակարարումը, արտադրած ապրանքների ստանդարտիզացիան ու սպառումը, վարկատվությունը, արճեստանոցների մեքենայացումը և վոր գլխավորն է՝ կուլտ-կրթական աշխատանքը:

Այս բոլորը, իհարկե, այժմ իրականանում է ու հետզհետե մտնում կյանքի մեջ:

Յեթե, ինչպես որինակ, վերցնենք Թիֆլիզի մեր վարկային արդյունաբերական կոոպերատիվ ընկերությունը, վորը ներկայումս միացնում է մոտ 2000 ինքնաշխատ տնայնագործներ՝ կոեսնենք, վոր այնտեղ, դեռ անցյալ տարի, քառասյին զբուծյուն էր տիրում: Նյութական վնասը խոշոր էր, կոոպերատիվային գիծը թույլ էր տարվում ու կուլտ-կրթական աշխատանքը միանգամային բացակայում էր: Տնայնագործ անդամների կողմից չկար վստահություն դեպի իրենց կազմակերպությունը, ու փոքրիկ սեփականություն տեր այս աշխատավոր մարդիք անում էյին այն, ինչպես իրենք էյին հասկանում: Նրանց համար դեռևս պարզ չէր հասարակական աշխատանքի եյությունը ու ըմբռնելի չէյին տնայնագործության վերաբերյալ կուսակցություն և Խորհրդային Իշխանություն ունեցած նշանաբաններն ու

պահանջը: Նյութական ծանր զբուծյան և հրամ նյութերի մատակարարման բացակայություն պատճառով մեր անդամները, համարիա, կապ չունեյին վրաստանի Տնարկոպի հետ: Նրանք անբարիացակամ վերաբերմունք էյին ցուցադրում դեպի տնարկոպը, չգիտակցելով, վոր նրա միջոցով է միայն, վոր կարող են մանել Համառուսական Արդյունաբերական կոոպերացիայի միություն ցանցի մեջ ու աշխատանք տանել միացած ույժերով իրենց զբուծյունը բարելավելու և Խորհրդային Պետություն կազմած մատակարարման նախագծի մեջ մանելու:

Կրկնում ենք, չկար կուլտ-կրթական աշխատանք, վոր ինքնաշխատ տնայնագործները դաստիարակվեյին բանվորական հոգով ու պրոլետարիատի հետ միասին, ձեռք-ձեռքի տված, գնային դեպի սոցիալիզմի շինարարություն:

Անցյալ տարի վարկային ընկերությունը փոխեց իր գործունեյություն յեղանակը՝ նա ընտրեց նոր վարչություն, դնելով իր գլուխ պատասխանատու անձնավորություն և սկսեց իսկական կոոպերատիվ աշխատանք: Ընկերությունը բարելավեց իր անդամների մատակարարման ու արտադրած ապրանքների սպառման գործը, վարկեր բացեց նրանց, ուղղեց իր ֆինանսական զբուծյունը և սպա, ձեռք բերելով իր անդամների վստահությունը, դիմեց լայն չափով կուլտ-կրթական աշխատանքների:

Յեվ քանի վոր դեռ ևս պարզ չէր, բոլոր ինքնաշխատ անդամների համար՝ թե ի՞նչ է Տնայնագործ

արդյունաբերական կոոպերացիան և Սոցիալիստական շինարարութիւնը և թե ինչ դեր պետք է կատարի ամեն մի անգամ, իր կազմակերպութեան մեջ, սոցիալիզմի կառուցման գործում, ու չկար վրա մասին տեղական լեզուներով գրականութիւն՝ ընկերութեան վարչութեան նախագահ—ընկ. Գ. Թարխանովը թարգմանեց ու լույս ընծայեց վրացերէն լեզվով Լացարիսի ներկա աշխատութիւնը: Բացի այդ, ընկ. Գ. Թարխանովը, զեղջելով ընկերութեան մեջ հայ անդամների խոշոր թիվը, հանձնարարեց ինձ թարգմանել նույնը հայերէն լեզվով—մեր սնայնագործ արհեստավորների լայն խավերի մեջ տարածելու ու նրանց իրենց անելիք գործը հասկացնելու նպատակով:

Լ. Ա.

## 1. ԻՆՉՊԵՍ՝ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՉՄ.

Բանվոր դասակարգը, յուր առաջնորդ՝ Վ. Ի. Լենինի ղեկավարութեամբ, չքավոր գյուղացիութեան հետ միասին, 1917 թվի հոկտեմբերին, հաղթելով գործարանատերերին, կալվածատերերին ու ցարին, սկսեց կյանքի մեջ մտցնել, մինչև այդ որը չը տեսնված, նոր կարգեր: Բայց խորհրդային իշխանութեան թշնամիները, բազմաթիվ զորախմբերով, հարձակվեցին նրա վերա ու ուզում էին բանվորի և գյուղացու արյունի մեջ խեղդել՝ աշխարհիս մեջ առաջին աշխատավորական հանրապետութիւնը: Աշխատավոր դասակարգը, վոր պետութեան ղեկը վերցրել էր իր ձեռքը և ուրիշ յեղջ չուներ՝ ստիպված յեղապի հիմնովին քանդել հին փթած կազմը յուր բոլոր կարգ ու կանոններով:

Յերեք տարի շարունակ աշխատավոր մասսան զենքը ձեռքին պաշտպանում էր իր իշխանութիւնն ու նոր կարգերը: Ամենքն էլ լավ հիշում են այն որերը, յերբ Խորհրդային Ռուսաստանը շրջապատել էին հակահեղափոխական նեղ ողակով վոչ միայն նրա ներքին «հայրենի» թշնամիները, այլ և ոտար պետութիւնները:

Յեկ միայն այն ժամանակ, յերբ յետ մղվեցին Խորհրդային Իշխանության վրա կատարված արաքերն հարձակումները, յերբ ջախջախվեցին ներքին թշնամիների ուժերը, հնարավոր յեղավ սկսել ու արագ թափով առաջ տանել նոր կարգերի կառուցումը:

Իսնվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության և նրա ղեկավար՝ Վ. Ի. Լենինի առաջնորդությամբ, ամրացրեց յուր կապը աշխատավոր գյուղացիության հետ, և հիմնվելով չքավորների վրա, միջնակների ոգնությամբ, իրագործեց բանվոր-գյուղացիական դաշինքը: Այս ամենը հարկավոր եր նրա համար, վորպեսզի բանվոր դասակարգը, ամրացնելով իր ձեռքին պետական ղեկը, կարողանար իր բոլոր ուժերն ու պետական միջոցները ուղղել գեպի կռիվ հին կարգերի դեմ և կյանքի մեջ մտցնել նոր սոցիալիստական կարգեր: Իմանալով, վոր ցարի որենքները արդեն ասելի յեն դարձել յերկրի աշխատավոր ժողովրդի համար, բանվոր դասակարգը հրավեր ուղարկեց Խորհրդային հանրապետության բոլոր աշխատավորներին՝ գալ ու կազմակերպել նոր սոցիալիստական կարգեր:

### Ի՞նչ է ՍՈՅԻՍԼԻԶՄԸ.

Խորհրդային հանրապետության քաղաքացիները շատերը կարծում են, վոր Սոցիալիզմը—մի ինչ վոր դժվարին, մեծ իմաստության ու հմտության կարոտ գործ է, վորին մենք մեր կյանքում չենք կարող հասնել: Ուրեմն նստել ու սպասել սոցիալիստական կար-

գերի գալուն, նրանց կարծիքով, չարժի նույն իսկ դրա մասին մտածել և քանի վոր մեր կյանքում սոցիալիզմը մեզ չի համեւելու, ուրեմն նա մեզ հարկավոր չէ: Այսպիսի մարդիք աշխատում են դասավորել իրենց կյանքը այնպես, վոր որ որի վրա ապրեն և այն էլ լավ ապրեն: Շատ հաճախ այսպիսի մտքեր կարելի է լսել ինքնաշխատ մարդկանց և տնայնագործարհեստավորների շրջանում:

Այս տեսակ մտքերը անպայման սխալ են: Սոցիալիզմը, իհարկե, յերկնքից չի իջնում և մեզանից է կախված սոցիալիզմի գալուստը՝ արագ կամ դանդաղ կերպով: Ահա թե ինչ եր ասում, դեռևս 1918 թվին, Վ. Ի. Լենինը Խորհրդային Իշխանության մտտակա խնդիրների մասին:

«Հարկավոր է, վոր բանվորա-գյուղացիական պատգամավորների խորհուրդները անմիջապես դիմեն հնարավոր փորձնական քայլերի՝ իրագործելու Սոցիալիզմը» (հեղ. ժող. հ. XX, յերես 137):

Այսպես ուրեմն սոցիալիզմի կառուցման խնդիրը՝ մեր բոլոր կազմակերպությունների գործնական խրնդիրն է և նրանք, Խորհրդային Հանրապետության մեջ, իրենց առորյա աշխատանքները պետք է տանեն այնպես, վոր կարողանան ոգնել սոցիալիստական կարգերի իրագործմանը:

Ինչ է, ուրեմն, Սոցիալիզմը: Յեթե կարճառոտ կերպով բացատրենք սոցիալիստական կարգերի միտքը՝ պետք է ասենք, վոր Սոցիալիզմը բուրժուազիայի վրա պրոլետարիատի տարած հաղթության արդյունքն է:

Սակայն պրոբետարիատը, բուրժուազիային հաղթելուց անմիջապես հետո, դեռևս շատ ջանքեր պետք է գործ դնի, վորպեսզի կարողանա հիմնել սոցիալիստական կարգեր, առավել ևս մեզ մոտ Ռուսաստանում, վորտեղ, մինչև բուրժուազիայի պարավելը, չը կար կատարելագործված տնտեսութուն:

Այսպիսի համառ աշխատանքի հետևանքը պետք է լինի՝ ստեղծել այնպիսի կարգեր, վորտեղ չը կան նախ և առաջ այլ և այլ դասակարգեր և ապա յերբ յերկրի արդյունաբերութունը, առևտուրն ու կառավարութունը ամբողջովին գտնվում է ժողովրդի ձեռքին: Սոցիալիզմի ժամանակ չը պետք է լինի մասնավոր սեփականատեր՝ վոչ արդյունաբերության մեջ և վոչ էլ առևտրի ու գյուղատնտեսության մեջ: Սոցիալիզմի ժամանակ չի լինելու վոչ մի մարդ, վոր ապրի անաշխատանք յեկամուտով:

Այսպիսի կարգերի կարելի է հասնել միմիայն խորհրդային հասարակության լայն խավերի աշխատանքով: Յեվ բանվորը և գյուղացին, անայնպիսիներն ու խորհրդային միության բոլոր աշխատավորները՝ պետք է լարեն իրենց բոլոր ջանքերը, վորպեսզի մոտեցնեն Սոցիալիզմի գալուստը:

Յեթե այժմ մի հայացք ձգենք այն ճանապարհի վրա, վորով մենք անցել ենք, այն ժամանակ մենք պարզ կը տեսնենք, թե վորքան ամուր կերպով ենք մենք դրել Սոցիալիզմի հիմքը:

Տարեց տարի գնալով նսեմանում ու փոքրանում է մասնավոր արդյունաբերության և առևտուրի նշա-

նակութունը, ու ընդհակառակը ավելի ու ավելի է մեծանում պետական և կոոպերատիվ արդյունաբերութունն ու առևտուրը: Յերկրի կառավարութունը գտնվում է հարյուր հազարավոր աշխատավորության ձեռքին: Գյուղխորհրդից սկսած մինչև Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն՝ բոլոր իշխանութունը գտնվում է ամբողջովին ու անբաժան կերպով աշխատավորության ձեռքին:

Ո՞վ է ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՅՄԱՆԸ:

Մենք դեռ չունենք Սոցիալիզմ, բայց մեր պետական գործերը այնպես են դրված, վոր հնարավոր լինի ստեղծել Սոցիալիզմ:

Պրոլետարիատի և նրա լավագույն ու առաջավոր մասի՝ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ—մեր յերկրի աշխատավոր ժողովուրդը կոչված է իր պետութունը ամբացնելու:

Ահա թե ինչ խնդիրներ եր դնում Վ. Ի. Լենինը կուսակցության և կառավարության առաջ աշխատավոր մասսայի մասնակցության համար պետութունը ամբացնելու գործում:

«Մենք պետք է հիշենք, վոր, մեր առօրիա աշխատանքների մեջ, կամ մենք պետք է ծայրահեղ կերպով լարենք մեր ույժերը, կամ մեզ սպասում է անանցական կորուստ»:

...«Գործը պետք է դնել այնպես, վոր ամեն մի աշխատավոր գործադրի իր բոլոր ույժերը՝ ամբացնելու բանվորա-գյուղացիական պետութունը»:

Այսպես ուրեմն ամեն մի աշխատավոր, վոր մասնակցում է իր պետութեան գործերին—նա մասնակցում է և Սոցիալիզմի կառուցմանը:

Աշխատավոր մարդիք ինչքան ել, վոր լարեն իրենց ուշտերը, յեթե նրանք գործում են մեկը մյուսից առանձին, չեն կարող կազմել սոցիալիստական հասարակութուն: Սոցիալիզմի որոք յերկրի բոլոր արդյունաբերութիւնը, առևտուրն ու գյուղատնտեսութիւնը պետք է պատկանի ամբողջ հասարակութեանը անբաժան կերպով:

Յե՛վ յեթե մի վորեւե առանձին բանվոր, կամ գյուղացի, կամ անայնագործ անհատորեն ուղեանս սոցիալիզմ շինել՝ վոչինչ չի դուրս գալ: Նրանցից ամեն մեկը նախ իր աշխատանքի պտուղը կը գործադրի միմիայն իր համար և ապա հասարակութիւնը յերբեք չի կարող իմանալ թե ամեն մի անհատ ինչ՞ է մտածում անելու: Հասարակութիւնը, այսպիսի հանգամանքներում, չի կարող կառավարել յերկրի անտեսութիւնը: Ուրեմն պարզ է, վոր ամեն մի անհատ, վորքան ել վոր նա աշխատեր առանձնացած կերպով, չեր կարող զարգացնել հասարակութիւնը և տանել նրան դեպի Սոցիալիզմ:

Ինչպիսիք գասակարգը, վոր միշտ աշխատում է մեծ խմբերով (կան գործարաններ, վորտեղ ամեն մեկում աշխատում են մի քանի հազար բանվոր) և կապված է պրոֆմիութիւնների ու կուսակցութեան հետ, հաստատուն կերպով իմանում է իր անելիք գործը—թե ի՞նչ ճանապարհով պետք է գնա, վոր շու-

տով հասնի սոցիալիզմին: Իմանալով իր ուշտերը, նա շահավետ կերպով կգործադրի նրանց:

Ուրեմն սոցիալիզմի հիմնական շինարարը բան-վոր դասակարգն է:

Ինչպիսիք գասակարգը իմանում է վոչ միայն իր ճանապարհը, այլև ինչպես սոցիալիզմի հիմնադիր ու կառուցող մեր յերկրում, իմանում է և իր դաշնակից աշխատավոր գյուղացիութեան լավագույն ճանապարհը—դեպի սոցիալիզմ:

Այդ ուղին թելադրում է միացնել գյուղացիների անհատական անտեսութիւնները և կազմակերպել միասնական խոշոր անտեսութիւններ: Այդ ուղին կոչվում է—կոոպերացիա: Այս ճանապարհով պետք է գրնան և մյուս աշխատավորները, վորոնց թվում է սընայնագործն ու արհեստավորը: Սրա մասին մանրամասն կերպով կխոսենք հետո, առայժմ միայն պետք է նկատենք, վոր անհատորեն աշխատելով չի կարելի սոցիալիզմ կառուցել: Սոշոր կոլեկտիվներն ու միասնական ուժեղ անտեսութիւնները պետք է լինեն ամեն մի անհատի միակ յերըը, յեթե նա ուզում է մասնակցել սոցիալիզմի կառուցմանը:

ՆԱԽԱԳԻԾԸ—ՀԻՄՔՆ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ:

Սոցիալիստական հասարակութեան առանձնահատկութիւններից մեկը—խստիվ համաձայնեցրած աշխատանքն է իր բոլոր ճյուղերի մեջ: Սա հարկավոր է նրա համար, վոր անողուտ կերպով վոչինչ չկորչի այն մեծ անտեսութեան մեջ, վորպիսին ինքը պետութիւնն է:



Հասարակութեան այսպիսի համաձայնեցրած աշխատանքը հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ առանձին մեծ ու փոքր կազմակերպութիւնները կը գործեն առաջուց մտածված ծրագրով: Պետական արդյունաբերութիւնը, վոր միացած է տրեստներում ու սինդիկատներում, վաղուց է արդեն աշխատում առաջուց կազմած նախագծերով: Նախամտածված ծրագրով պատրաստվում են հում նյութեր և արտադրվում ապրանքներ: Անհրաժեշտ է, վոր տնայնագործական արեւունաբերութիւնը նույնպես աշխատի առաջուց կազմած ծրագրով ու նախագծով: Սրա հետ միասին հարկավոր է, վոր պետական արդյունաբերութիւնը ևս իր կողմից իմանա ու հաշվի առնի տնայնագործների պահանջը հում նյութերի վերաբերմամբ, վորպեսզի իր ժամանակին կարողանա տալ նրանց այդ նյութերը: Հարկավոր է, վոր գյուղացիութիւնը, վոր պատրաստում է հում նյութեր—բուրդ, կաշի, վուշ, բամբակ և այլն, հաշվի առնի նրանց պահանջը պետարդյունաբերութեան և տնայնագործութեան մեջ ու իր ժամանակին բավարարի այդ պահանջը:

Այսպես ուրեմն, յեթե հասարակական տնտեսութեան ամեն մի ճյուղը—պետարդյունաբերութիւնը, տնայնագործութիւնն ու գյուղատնտեսութիւնը, իր ժամանակին և բավարար քանակութեամբ տա այն ամենը, ինչ վոր նրանից պահանջվում է, այն ժամանակ պետութեան աշխատանքը սոցիալիստական շինարարութեան մեջ կհեշտանա:

Յեթե այժմ մտածելու լինենք թե ինչպէս կազմակերպվենք, վոր կարողանանք նախամտածված ծրագրով աշխատել, դարձյալ կհանգենք այն կետին, վոր անհնար է անհատորեն աշխատելը, այլ հարկավոր է կազմակերպել խոշոր տնտեսական միութիւններ: Յեթե հաշվի առնենք, վոր Խորհրդային հանրապետութիւնների միութեան մեջ աշխատում են մոտ 3 և կես միլիոն տնայնագործներ, այն ժամանակ պարզ կլինի, վոր հնարավոր չէ կազմել այնպիսի մի նախագիծ, վոր կարողանա բավարարել 3 և կես միլիոն մարդու պահանջները, յեթե նրանք աշխատում են մեկը մյուսից առանձին ու անկախ:

Միմիայն խոշոր տնտեսական միութիւնների միջոցով կարելի կլինի համաձայնեցնել իրար հետ Խորհրդային պետութեան բոլոր ճյուղերի աշխատանքները:

Համաձայնեցնելով միմիանց հետ առանձին ճյուղերի աշխատանքը, կհեշտանա սոցիալիզմի կառուցումը:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴՅՈՒՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՇ-  
ԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱ-  
ԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Խոսելով վերևում սոցիալիստական շինարարութեան մասին, մենք խոսեցինք նաև կոոպերացիայի մասին: Կոոպերացիան մի միջոց է, վորով առանձին ամեն մեկը իր համար աշխատող տնայնագործները պետք է միանան ու մտնեն խոշոր կազմակերպութիւնների մեջ:

Ի՞նչ է կոոպերացիան: Յեթե կարճ ասենք— կոոպերացիան աշխատավորների միությունն է, վոր պետք է բարելավի նրանց նյութական դրությունը և բարձրացնի նրանց կուլտուրական մակերևութը: Այստեղ շատերը կարող են հարց տալ, վոր, յեթե կոոպերացիայի նպատակը անհատորեն աշխատողների նյութական դրության բարելավումն է՝ ապա ել ինչի՞ն է հարկավոր սոցիալիստական շինարարությունը:

Այս հարցը հարկավոր է պարզել: Յեթե մենք չունենայինք կոմունիստական կուսակցություն և յեթե բանվոր դասակարգը կանգնած չլիներ յերկրի վարչության գլխին, այն ժամանակ կոոպերացիան ել մեզ հարկավոր չեր լինիլ, քանի վոր այդպիսի կոոպերացիան կը ծառայեր կապիտալիզմին և վոչ թե սոցիալիզմին:

Վ. Ի. Անինը խոսելով կոոպերացիայի մասին իր վերջին հոդվածներում, ասել է, վոր կոոպերացիան բանվորների կողմից պետական վարչությունը գրավելու ղեպքում, ունի բոլորովին այլ նշանակություն, քան բուրժուական յերկրներում:

Շատ պարզ է, ինչպես մի փոքր առաջ հիշեցինք, վոր պրոլետարիատը գլխավոր մասնակցողն է սոցիալիզմի շինարարության մեջ: Զարգացնելով խոշոր արդյունաբերությունը, ամբացնելով գյուղատնտեսությունը և ղեկավարելով առևտուրը պրոլետարիատը գրանով իրագործում է սոցիալիզմի կառուցումը: Բայց կան և անտեսական ուրիշ ճյուղեր, վորտեղ չկա խոշոր արդյունաբերություն, վորտեղ առանձին անհատ-

ները աշխատում են առանց նախագծի—առանց ղեկավարության: Տնտեսության այսպիսի ճյուղերում հնարավոր չէ տանել ծրագրված աշխատանք, հնարավոր չէ առանձին անհատների աշխատանքները համաձայնեցնել խոշոր արդյունաբերության հետ: Ամեն մի այսպիսի անհատ, բնականաբար, մտածում է միայն իր անձնական բարիքների մասին—աշխատելով իր համար միայն ոգտագործել իր գործի տված պատուները:

Առանձին անհատը աշխատելով այնպես, ինչպես ինքն է կամենում, չի կարող իմանալ թե յերկրի համար ինչ մեծ նշանակություն կունենա իր գործն ու արտադրած ապրանքը, յեթե միացնի ուրիշների պատրաստածի հետ:

Առանձին անհատը դուրս գալով շուկա, իբր մասնավոր առևտրական իր արտադրած ապրանքը ծախելու համար, բոլորովին շահագրգռված չէ այն հարցի մեջ, թե արդյոք ներկա մոմենտին կա՞ այդ ապրանքի կարիքը թե վոչ: Նա ուզում է ծախել այդ ապրանքը ու փող ստանալ ու ել ուրիշ բան նրան չի հետաքրքրում և իհարկե հասկանալի չէ, վոր այսպիսի հանգամանքներում նա չի կարող ոգնել սոցիալիզմի շինարարությանը: Ընդհակառակը վորքան յերկար սեկի այսպիսի անհատի գոյությունը, այնքան ել յերկար պետք է սպասենք սոցիալիզմի գալուն:

Պրոլետարիատի խնդիրներից մեկն էլ այն է, վոր նա միացնի առանձին աշխատող անհատներին, ղեկավարի և ստուգի նրանց աշխատանքը ու համա-

ձայնեցնի այդ Սորհրդային պետութեան աշխատանքների հետ: Այս բանի համար պրոլետարիատը սգտագործում է հին ձևը—կոոպերացիան, տալով նրան բոլորովին այլ նշանակութիւն: Կոոպերացիայի միջոցով, վորը ընդգրկում է ժողովրդի լայն խավերը, բանվոր դասակարգը միացնում է հողագործ գյուղացիների ու անայնագործների շահերը պետութեան շահերի հետ:

Կոոպերացիան բանվոր դասակարգի ղեկավարութեան տակ, վոչ միայն բարվոքում է առանձին անհատների նյութական դրութիւնը, այլ և սրա հետ միասին միացնում է նրանց շահերը Սորհրդային Պետութեան խնդիրների և շահերի հետ: Այսպես ուրեմն կոոպերացիան մի միջոց է, վորի ոգնութեամբ աշխատավորութեան լայն խավերը մասնակից են դառնում սոցիալիզմի շինարարութեան գործին:

## II. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ.

Մենք արդէն հիշեցինք, վոր այն հիմնական խնդիրը, վոր պետք է իրագործի աշխատավոր դասակարգը—սոցիալիզմի կառուցումն է: Այս հարցը կարելի չէ լուծել միայն այն դեպքում, յերբ սոցիալիզմի շինարարութեանը կը մասնակցեն մեր յերկրի անբովանդակ տնտեսութեան բոլոր խավերը: Բայց քանի վոր մեր յերկրի տնտեսութեան կարևոր ճյուղերից մեկն էլ անայնագործական արդյունաբերութիւնն է, ուրեմն դժվար է մտածել, վոր առանց նրա մասնակցութեան մենք կարող ենք մինչև վերջ առաջ տանել սոցիալիզմի շինարարութեան գործը:

Հարցի ամբողջ ելութիւնը կայանում է նրա մեջ— թե ինչպես պետք է ոգնի սոցիալիզմի կառուցմանը անայնագործական արդյունաբերութիւնը, վորտեղ աշխատում են մեծ թվով անհատներ: Սրա մասին մանրամասն կերպով կխոսենք հետո, առ այժմ պետք է ասենք, վոր անայնագործական արդյունաբերութիւնը հում նյութերից ու կիսապատրաստ մթերքներից արտադրում է զանազան տեսակ ապրանքներ և խոշոր արդյունաբերութեան նման մատակարարում

ե Ժողովրդին այդ ապրանքները: Վորպեսզի տնայնա-  
դործական արդյունաբերութիւնը լավ հիմքերի վրա  
լինի դրված և նրա արտադրած ապրանքների հաս-  
կութիւնը լինի բարձր և գներն ել եժան, անհրա-  
ժեշտ է, վոր նա ել կազմակերպվի խոշոր տնտեսա-  
կան միութիւնների ձևով ու գործադրի նոր տեխնի-  
քական միջոցներ:

**ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅեՎ  
ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ:**

Ի՞նչ նշանակութիւն ունի պետութեան համար  
տնայնագործական արտադրութիւնը: Յեթե համեմա-  
տելու լինենք Տնայնագործութեան բոլոր ճյուղերի  
արտադրած ապրանքների քանակը պետարդյունաբե-  
րականի հետ, կտեսնենք, վոր նա կազմում է պետա-  
կանի մոտ 30 տոկոսը,— ուրեմն պարզ է թէ ինչ  
մեծ նշանակութիւն ունի պետութեան համար տնայ-  
նագործական արդյունաբերութիւնը:

Այստեղ հարկավոր է նկատել, վոր պետարդյու-  
նաբերութեան գլխավոր ճյուղը՝ ծանր արդյունաբերու-  
թիւնն է, վոր արտադրում է զանազան մեքենաներ,  
գազգյահներ, անիւններ, պողպատ, յերկաթ, չուգուն և  
այլն— մի խոսքով գործիքներ ու կիսապատրաստ մթերք-  
ներ: Տնայնագործութիւնը ըստ մեծի մասին թեթև  
արդյունաբերութիւնն է, վոր արտադրում է կոշկե-  
ղեն, հագուստ, տնական գործածութեան պարագաներ  
և փայտի ու մետաղի իրեր, զանազան սարք ու

կարգ և այլն— մի խոսքով այնպիսի ապրանքներ, վո-  
րոնք անմիջապես գործածութեան նյութ են դառնում:

Տնայնագործական արդյունաբերութեան նշանա-  
կութիւնը յերկրի մեջ փոքր չէ, վորովհետև նրա ար-  
տադրած ապրանքները համեմատած պետական թեթև  
արդյունաբերութեան հետ կազմում են ամբողջի 26,4  
տոկոսը: Ուրեմն վոչ մի կերպ չի կարելի աչքաթող  
անել Ժողովրդական տնտեսութեան այս ճյուղը:

Յեթե ավելի մոտիկից նայենք տնայնագործու-  
թեան մի քանի ճյուղերին, կտեսնենք վոր նրանց ար-  
տադրութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի յերկրի  
համար: Կոշկակարութիւնը, գուլպա և ասեղնագոր-  
ծութիւնը, գեղարվեստական իրերի արտադրութիւնը,  
պետարդյունաբերութեան նման ճյուղերի հետ համե-  
մատած, կազմում են ամբողջի 72,3 տոկոսը— այս-  
ինքն յերկու յերորդից ավելին: Համի և կերակուրի  
նյութերը 51 տոկոս— կեսից ավելին:

Մի փոքր պակաս նշանակութիւն ունի տնայ-  
նագործութիւնը իր հետևյալ ճյուղերի մեջ՝ մետաղ-  
ների մշակումն 25,6 տոկոս, կաշվե և մորթեգոր-  
ծութիւն 25,3 տոկոս, հանքագործութիւն 11 տոկոս,  
մետաքս, բամբակ և կտավագործութիւն 4,7 տոկոս:

Յեթե հաշվի առնենք այս թվերը, կտեսնենք,  
վոր տնայնագործական արդյունաբերութիւնը իր մի  
քանի ճյուղերում Ժողովրդական տնտեսութեան մեջ  
գրավում է տիրապետող դիրք, և մնացած ճյուղերում  
լրացնում է պետարդյունաբերութեան պակասորդը:

Տնայնագործ արդյունաբերութիւնը խորհրդային

Միութեան ազգային շրջաններում ունի ավելի ևս մեծ նշանակութիւն՝ նրա արտադրութիւնը յերկու անգամ ավելի է պետականից: Ուրեմն պարզ է, վոր այդ շրջաններում տնայնագործութիւնը սոցիալիզմի կառուցման գործում բոլորովին այլ նշանակութիւն պետք է ունենա:

Տնայնագործների ընդհանուր թիվը Ռուսաստանում հասնում է 2 միլիոն 72 հազար մարդու, վորոնց մեծ մասը ինքնաշխատ անհատներ են: Նրանց միայն 4 տոկոսն է, 123,430 մարդ, վոր ոգտվում է վարձու բանվորներով: Այսպես ուրեմն՝ ինքնաշխատ տնայնագործները կազմում են ընդհանուր թվի 80%<sup>0</sup>

2 վարձու բանվոր ունեցողները	14,5 <sup>0</sup> / <sub>0</sub>
3-ից 5 » » »	4,7 »
6-ից 10 » » »	0,3 »
11-ից 15 » » »	0,1 »
և 15-ից ավելի » » »	0,1 »

Այս ցուցակը ցույց է տալիս, վոր տնայնագործները ըստ մեծի մասին ինքնաշխատ մարդիք են և չեն ոգտվում վարձու ուժով, այլ ապրում են բացառապես իրենց անձնական աշխատանքով: Ուրեմն տնայնագործների այսպիսի կազմը կարելի է հաջող համարել, քանի վոր նրանք ըստ ելութեանն ունեն բանվորներն են, վոր փոխարեն գործարաններում աշխատելու—աշխատում են իրենց տանը:

Այժմ յեթե մենք մի հայացք ձգենք տնայնագործութեան անցյալի վրա, կտեսնենք վոր հին ժամանակ նա է յեղել արդյունաբերութեան միակ ձևը:

Ուրեմն տնայնագործութեանն է գրել արդյունաբերութեան սկիզբը: Առաջ յերբ չկային կազմակերպված պետութիւններ ու ժողովուրդը ապրում էր մանր համայնքներով, կային զանազան մասնագետներ, վորոնք ժողովրդի համար պատրաստում էին գործադրութեան զանազան իրեր: Այսպես էին՝ կոշկակարները, գերձակները, բրուտները, դարբինները և այլն: Դեռ ևս մինչև այժմ էլ, յերկրի հեռավոր վայրերում, կան այդպիսի մասնագետներ, վորոնք ծառայում են թե իրենց գյուղին և թե հարևան գյուղերին:

Ներկա պայմաններում, ինչպես հայտնի է, մեր յերկրի տնտեսական կյանքի մեջ գլխավոր տեղը պատկանում է խոշոր արդյունաբերութեանը: Այնուամենայնիվ սրանից չի կարելի յեզրակացնել, վոր տնայնագործութիւնը շուտով պետք է վերջանա: Այսպիսի գատողութիւնը անհիմն է ու անպայման վնասակար:

Վորպեսզի կարողանանք ավելի պարզ կերպով պատկերացնել մեզ մեր յերկրում տնայնագործ-արդյունաբերութեան ապագան, պետք է համեմատութեան համար վերցնենք Յեվրոպական յերկիրները (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա և այլն), վորտեղ տեխնիկան ու արդյունաբերութիւնը ավելի է զարգացած, քան մեզ մոտ:

Անգլիայում պատերազմից առաջ տնայնագործութեամբ պարապում էին արտադրութեան հետեյալ ճյուղերում՝

Լայն գործադրութեան իրեր 409 հազար մարդ  
 կար ու ձև, գլխարկներ և այլն 300 » »  
 մետաղիա իրեր 14 » »



Գերմանիայում տնայնագործութեան ու մանր արդյունաբերութեան նշանակութիւնը ավելի մեծ է, քան Անգլիայում: Մինչև 5 բանվոր ունեցող ձեռնարկութիւններում աշխատողները թիվը հասնում է 2 միլիոն 837 հազար մարդու, վորոնցից ինքնաշխատ անհատներ 751.119 մարդ:

Շվեյցարիայում կան մոտ 53 հազար արհեստավորներ: Յեթե համեմատելու լինենք այս թիվը գործարաններում աշխատող 302.157 բանվորութեան հետ, կտեսնենք վոր այնտեղ ևս տնայնագործութիւնը ունի մեծ նշանակութիւն:

Առաջ բերած թվերը պարզ ցույց են տալիս, վոր Յեվրոպական յերկրներում, ուր արդյունաբերութիւնը ծայր աստիճանի զարգացած է, դեռ ևս կա տնայնագործութիւն ու արհեստավորութիւն:

Մեզ մոտ ուրեմն տնայնագործական արդյունաբերութիւնը շուտով անցնելու գործ չի ու պարզ է, վոր դեռևս շատ տարիներ պետք է անցնեն, վոր նա այլևս յերկրի տնտեսութեան համար հարկավոր չլինի: Բացի այդ մենք չպետք է մոռանանք, վոր Խորհրդային հանրապետութիւնը մեզ մոտ զարգանում է բոլորովին ուրիշ ճանապարհով, քան մյուս Յեվրոպական պետութիւնները, ուր դեռ իշխում է կապիտալիստական կազմը:

Խորհրդային իշխանութիւնը հնարավորութիւն է տալիս տնայնագործին, կապիտալիստի կողմից չը շահագործվելով հանդերձ, արդյունաբերական կոոպերացիայի ոգնութեամբ զարգացնել իր ձեռնարկութիւնը,

բարձրացնել նրա տեխնիկան ու խոշորացնել իր արտադրութիւնը: Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստական յերկրներում արդյունաբերութեան զարգացման հետ միասին մեռնում է տնայնագործութիւնը կամ ընկնում կապիտալի ճորտութեան տակ: Ուրեմն տնայնագործական արդյունաբերութեան ապագա վիճակը վորոշելիս, հարկավոր է ինկատի ունենալ այս բոլոր պայմանները: Խորհրդային պետութիւնը վոչ մի ջանք չի խնայում տնայնագործութիւնը պաշտպանելու համար, մինչև անգամ աշխատում է վերականգնել նրա մի քանի մոռացված ճյուղերը: Մրան ապացույց կարող է լինել այն վորոշումը, վոր հնգամյա նախագծով յենթադրվում է զարգացնել ու խոշորացնել տնայնագործութիւնը:

Վեց հիմնական արհեստների մեջ (մետաղագործութեան, կաշվեգործութեան, բամբակագործութեան, անտառաքիմիական, փայտագործական և կոշկակարութեան) յենթադրվում է արհեստավորների թիվը հինգ տարվա մեջ, 1927 թվից մինչև 31-ը, հասցնել 769 հազարից 883 հազարի:

Նույն ժամանակամիջոցում վորոշված է՝ նրանց արտադրութիւնը հասցնել 520 միլիոն ուրբուց մինչև 703,7 միլիոն ուրբու:

Պետութեան այս բոլոր վորոշումները ցույց են տալիս, վոր մտաիկ ապագայում յենթադրվում է զարգացնել տնայնագործական արդյունաբերութիւնը և վոչ թե կրճատել նրան, մանավանդ նրա այն ճյուղերը,

վորոնք աշխատում են տեղական հում նյութերով (փայտ, կավ և այլն):

Մեր այս բոլոր ասածների վրա պետք է ավելալացնենք յերկու հանգամանք՝ առաջին, վոր տնայնագործական արդյունաբերությունը զարգանալով — հրնարավորություն կառ մեծ թվով անգործ մարդկանց պարսպել արհեստներով ու արտադրել պետության համար հարկավոր ապրանքներ: Յերկրորդ, վոր արնայնագործարհեստավորները լինելով մասնագետ բանվորներ, իրենցից կըներկայացնեն մի պահեստ, վոր տեղից խոշոր արդյունաբերությունը կարող է իր համար պատրաստի բանվորներ վերցնել — մանավանդ յերիտասարդ արհեստավորների շրջանում:

### ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆ ՏՆԱՅ-ՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ:

Մենք արդեն ասել ենք, վոր միայն կոոպերացիայի միջոցով կարող են ինքնաշխատ մարդիք մասնակցել Սոցիալիզմի կառուցմանը: Սա գլխավորապես վերաբերում է տնայնագործներին: Տնայնագործարդյունաբերությունը արտադրում է շուկայի համար գործածական ապրանքներ և քանի, վոր իր միքանի ձյուղերում նա ավելի շատ է արտադրում քան պետարդյունաբերությունը — ուրեմն հարկավոր է նրա արտադրության ձեռ գնել պետականի նման լավ հիմունքների վրա: Այս բանը հարկավոր է նրա համար, վոր բանվորն ու գյուղացին յերբ տեսնում են շուկայում մի ապրանքից մի քանի տեսակ, բնականա-

բար աշխատում են ձեռք բերել միայն լավ տեսակը: Յեթե տնայնագործական ապրանքները հատկությամբ վատ լինեն, հնարավորություն չի լինիլ ծախել նրանց այնպիսի հաջողությամբ, ինչպես պետական գործարանների ապրանքները:

Արտադրած ապրանքների հատկությունը յերբեմն կախված չէ տնայնագործից, քանի վոր նա չունի կատարելագործված մեքենաներ ու շատ անգամ նա ըստիպված է լինում աշխատելու ժամանակ զիմել հին պապական միջոցների: Մրա պատճառով տնայնագործը՝ նախ կորցնում է ավելորդ ժամեր և ապա նրա արտադրած ապրանքը լինում է վատ տեսակի:

Միայն այս հանգամանքը չէ, վոր ստիպում է կուտակցությանն ու բանվոր դասակարգին այսքան ուժեղ կերպով զբաղվել տնայնագործի վիճակով, այլ կան և ուրիշ կարևոր հարցեր ևս: Տնայնագործը աշխատելով ուրիշներից անկախ, ինչպես ամեն մի ինքնաշխատ մարդ, ձգտելու է իր ձեռնարկության ամբողջ արդյունքը պահել միայն իր համար, ստեղծել դրամական գումարներ ու ապրել նրանց յեկամուտով:

Առաջվա ժամանակները կային տնայնագործներ, վոր հաջողեցնում էյին ու դուրս էյին գալիս այսպես ասած «շրջան»: Նրանք դառնում էյին փոքրիկ գործարանատերեր, կամաց կամաց հեռանում էյին աշխատանքից ու գործի ամբողջ ծանրությունը թողնում էյին վարձու բանվորների վզին:

Կային և ուրիշ տեսակի տնայնագործներ — «գնողներ», վորոնք զբաղվում էյին միայն ուրիշների

արտադրած ապրանքները գնելով ու ծախելով: Այսպիսի տնայնագործը ինքն անձամբ չէր աշխատում, այլ ապրում էր ուրիշների աշխատանքի պտուղներով:

Տնայնագործների այս յերկու տեսակն էլ Սորհրդային կազմի թշնամիներն են: Նրանք շարունակ մտածում են թե ինչպես գարգացնեն իրենց գործը և Սորհրդային իշխանության խնդիրների հետ վոչ մի առնչութիւն ու կապ չունեն, այլ ընդհակառակը ատում են այդ կարգերը:

Այսպես անա բարձրացնելով տնայնագործի արտադրած ապրանքների հատկութիւնը, կանոնավորելով հում նյութերի մատակարարումը և բարելավելով նրա աշխատանքի ձևերը, միաժամանակ կովելով նրա աշխատավոր կյանքից անվաստակին անցնելու ձգտումների ու պետութեանը թշնամի դառնալու հրնարավորութեան դեմ, կուսակցութիւնն ու Սորհրդային իշխանութիւնը ստիպված են նրան տանել իրենց հետևից: Անհրաժեշտ է, վոր ամեն մի աշխատավոր տնայնագործ իմանա, վոր նրա վերջնական նպատակը վոչ թէ անվաստակ յեկամուտը պետք է լինի, այլ միասնական աշխատանքը:

Այս բոլորը կարելի է իրագործել միայն դարգացնելով տնայնագործների մեջ կոոպերացիան: Քանի վոր մի յերկրում կոոպերացիան մասնակցում է սոցիալիզմի կառուցմանը, ուրեմն նրա միջոցով տնայնագործն էլ իր հերթին մասնակցելու է այդ գործին:

Այժմ հարկավոր է կանգ առնել մի հարցի շուրջը ևս, վոր դրված է մեր առաջ: Մենք առաջուց արդեն

ասել ենք, վոր յերկրի սոցիալիստական շինարարութեան մեջ հիմնական և առաջին տեղը բռնում է նախագծված տնտեսութիւնը: Սոցիալիստական հասարակութեան մեջ հիմնական ու առաջին տեղը բռնում է նախագծված տնտեսութիւնը: Սոցիալիստական հասարակութիւն կարելի է ստեղծել միայն այն ժամանակ, յերբ մենք կարողանանք ձշտորեն հաշվի առնել— թէ ի՞նչ ենք անում մենք այժմ և ի՞նչ ենք մտադիր անելու ապագայում: Արագ քայլերով մենք կարող ենք առաջ գնալ միայն այն ժամանակ, յերբ անսխալ կերպով հաշվի կառնենք մեր տնտեսութեան բոլոր ձյուղերի աշխատանքը:

Ամենքի համար հասկանալի է, վոր հնարավոր չէ հաշվի առնել ու նախագծել ինքնաշխատ տնայնագործների տնտեսութիւնն ու աշխատանքը, յեթէ նրանցից ամեն մեկին վերցնենք առանձին: Նախագիծը կարելի է իրականացնել միայն այն ժամանակ, յերբ բոլոր տնայնագործները կը կազմակերպվին: Նախագիծը նախատեսում է ամեն մի ինքնաշխատ անհատի ինչպես մատակարարումը, նույնպես և նրա արտադրած ապրանքների սպառումը:

Տնայնագործ անհատներին հավաքելով միմիայն կոոպերատիվ-արտելների մեջ, մենք դեռ չենք կարող ստանալ այն արդյունքը, վոր հարկավոր է արդյունարեքական կոոպերացիային՝ ոգնելու սոցիալիզմի շինարարութեանը: Վերջին տեղեկութիւնների համաձայն Սորհրդային հանրապետութիւնների ամբողջ Միութեան մեջ—կազմակերպված են մոտ 12 հազար



գանազան արդյունաբերական արտեղներ, և քանի վոր  
Սորհրդային իշխանութիւնը ոգնում ու քաջալերում է  
արտեղների կազմվելուն ու զարգանալուն, նրա թիֆն  
ածում է շատ արագ կերպով: Իհարկե բոլորովին ան-  
նպատակ աշխատանք կը լիներ մտցնել մատակարար-  
ման ու սպառման նախագծի մեջ 12 հազար մեկը  
միուսից անջատ արտեղներ:

Հնարավոր չէ նույնպես հրահանգել ու ստուգել  
Սորհրդային յերկրի մեջ ցրված 12 հազար արտեղների  
գործերը: Ուրեմն բավական չէ միայն արտեղներ  
կազմել ու դրանով բավարարվել և արդյունաբերա-  
կան կոոպերացիայի նպատակը լոկ արտեղներ կազ-  
մելը չէ: Ամեն մի արտեղ իր կողմից պետք է մտնի  
արդյունաբերական կոոպերացիայի միութեան մեջ:  
Արդյունաբերական կոոպերացիաների միութեանները  
իրենց հերթին պետք է կազմեն մի ընդհանուր Հա-  
մառուտական Արդյունաբերական կոոպերացիայի միու-  
թեան, վորով նրանք կավարտեն ամբողջ սխառմի  
կազմակերպութեանը և կը կարողանան իրագործել  
բոլոր իրենց խնդիրները:

Այսիսի ողակապ կազմակերպութեան միջոցով  
միայն, ինչպիսին է՝ արտելը, միութեանը, և սպա  
Համառուտական արդյունաբերական կոոպերացիայի  
միութեանը հնարավոր կը լինի ձեռք բերել նախա-  
գծված աշխատանք և արտեղների անդամների շահերի  
միավորումն, վոր զարկ կը տա նաև Արդյունաբերա-  
կան կոոպերատիվային շարժմանը:

Արդյունաբերական կոոպերացիայի միութեանը

համախմբելով իր նահանգի կամ շրջանի բոլոր ար-  
տեղները մի ընդհանուր կազմակերպութեան մեջ, դը-  
րանով հնարավորութեան կը տա տեղական Սորհրդա-  
յին իշխանութեանը— ոգտագործել այդ արտեղների  
աշխատանքը տեղական բնակիչների դրութեանը բա-  
բելավելու համար: Միութեան միջոցով տեղական Սոր-  
հրդային իշխանութեանը կարող է ազդել իր շրջանի  
արդյունաբերական կոոպերատիվների վրա ու գնել  
նրանց առաջը մի շարք խնդիրներ իրագործելու համար:

Մյուս կողմից, համախմբելով առանձին կոոպե-  
րատիվներին, միութեանը գնում է Սորհրդային հասա-  
րակութեան առաջ այնպիսի խնդիրներ, վորոնք առանց  
նրա ոգնութեան չեն կարող իրականանալ: Աշխատան-  
քի այս ձևով Սորհրդային Իշխանութեան և կոոպե-  
րացիայի միջև առաջ է գալիս մոտիկ փոխհարաբե-  
րութեան: Թեև Ժողովրդական Տնտեսութեան Սոր-  
հրդներին կից գոյութեան ունի առանձին տնայնա-  
գործական բաժին, վորը իր կողմից աշխատանք է  
տանում ոգնելու արտեղներին ու առանձին տնայնա-  
գործներին, այնու ամենայնիվ նրա այդ աշխատանքը  
իր չափով չի կարող բավարարել տնայնագործ-ար-  
հեստավորների լայն խավերի պահանջներին: Չի կա-  
րող բավարարել և նրա համար, վոր բացի պետական  
խնդիրներից, արդյունաբերական կոոպերացիայի առաջ  
գրված են և հասարակական կոոպերատիվային խըն-  
դիրներ:

Ինչ վոր ասացինք առանձին արդյունաբերական  
միութեանների մասին, նույնը պետք է ասենք և

Համառուսական Արդյունաբերական Կոոպերացիայի միութեան մասին: Զանազանութեանը միմիայն նրանումն է, վոր Համառուսական միութեանը հոգում է բոլոր միութեանների կարիքներն ու շահերը և դեկավարում է ամբողջ արդյունաբերական կոոպերացիայի աշխատանքները:

Տնայնագործ - Արդյունաբերական Կոոպերացիան ստեղծելով իր կենտրոնը, հնարավորութեան է ստանում իր կարիքների համար խոսել ուղղակի կենտրոնական դեկավար մարմինների հետ: Մրա հետ միասին, Համառուսական կենտրոնի միջոցով, նա կարողազանում է անցկացնել իր բոլոր ճյուղերի մատակարարման ու սպառման նախագիծը: Այս ձևով է իրագործվում միլիոնավոր տնայնագործների կոոպերացման յենթարկելու հարցը: Այս ձևով է Տնայնագործական Արդյունաբերութեանը ստեղծում իր միասնական գործը կազմակերպութեանը: Այսպիսի կազմակերպութեանը գործելով Խորհրդային կազմի բոլոր ճյուղերի հետ միասին համաձայն կերպով, ձեռք ձեռքի աված, մտցնում է ընդհանուր Վարչութեան մեջ մի այնպիսի անշատված ուշտ, ինչպիսին տնայնագործն է:

Տնայնագործներին կոոպերացման յենթարկելու և միասնական կազմակերպութեան մեջ համախմբելու խնդիրը դրել է մեր առաջ Վ. Ի. Լենինը: Յուր «Կոոպերացիայի մասին» հոդվածում Վլադիմիր Իլիչը ասում է հետևյալը.

«Այժմ մենք պետք է զիտակցենք, վոր ներկա ժամանակում այն հասարակական կազմը, վոր մենք

պետք է պահպանենք սովորականից ավելի — կոոպերատիվային կազմն է: Բայց նրան հարկավոր է պահպանել բառի բուն մտքով, այսինքն այս պահպանութեան տակ հարկավոր է հասկանալ՝ պահպանութեան այնպիսի կոոպերատիվի, վորի մեջ մասնակցում են ազգաբնակչության իսկական գանգվածները»:

Հետևաբար յերբ արտեղները կմտնեն միութեանների մեջ, միութեանները — Համառուսական կազմակերպութեան մեջ և յերբ տնայնագործ-արհեստավորները կհամախմբվեն, միայն այն ժամանակ կոոպերացիան ձեռք կբերի իր իսկական նշանակութեանը — ինչպես մասսայական կազմակերպութեան:

### ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՅԻԱՆ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻԱՆ:

Կուսակցութեան և Խորհրդային Իշխանութեան հիմնական խնդիրը յերկրի ինդուստրիալիզացիան է: Այս տեսակ վճիռ կայացավ կուսակցութեան XIV և Համամիութեան համաժողովներում: Այս խնդիրը պարտադիր է և արդյունաբերական կոոպերացիայի համար:

Ի՞նչ է յերկրի ինդուստրիալիզացիան: Խորհրդային Իշխանութեանը ցարի կառավարութեանից ժառանգեց պատերազմի միջոցին քարուքանդ յեղած ժողովրդական տնտեսութեան: Բայց և այնպես պատերազմից առաջ էլ ցարի կառավարութեանը չէր կարող պարծենալ լավ կարգ ու կանոնի տակ դրված ու զարգացած արդյունաբերութեամբ: Այս կողմից ցարական

Ռուսաստանը յետ եր մնում բոլոր Արևմտայեվրոպա-  
կան յերկրներէց ու նրանց հետեւից քարշ եր գալիս:

Իրա փոխարեն Արևմտայեվրոպական յերկրներէ  
արդյունաբերած ապրանքները սպառելու գործում —  
Ռուսաստանը իրենից ներկայացնում եր մի մեծ շուկա:  
Իրա համար ել Ռուսաստանը միշտ մեծ կախումն  
ունեւր այդ յերկրներէց: Այս դրությունը զգալ տվեց  
իր դառնությունը պատերազմի ժամանակ, մառաւանդ  
Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ մեր  
յերկիրը պաշարվեց կապիտալիստական ույժերով:

Այս բոլոր հանգամանքները ստիպեցին պրոլետա-  
րիատին և կոմունիստական կուսակցութեանը միջոցներ  
ձեռք առնել այսպիսի կախումներէց ազատվելու հա-  
մար:

Մեր հիմնական խնդիրն է — կազմակերպել սո-  
ցիալիստական տնտեսություն: Սոցիալիստական տըն-  
տեսութեան մեջ ամենազլխավոր տեղը բռնում է ար-  
դյունաբերութեանը: Մենք առայժմ չենք կարող զար-  
գացնել մեր արդյունաբերութեանը, յեթե արտասահ-  
մանից չը ներմուծենք մեքենաներ՝ ու գործիքներ:  
Իհարկէ մինչև մենք չսովորենք շինել ինքներս մեզ հա-  
մար այդ մեքենաներն ու գործիքները, մենք չենք ել  
կարող մտածել սոցիալիզմի մասին: Առանց արտա-  
սահմանյան հոտովետ յուղերի, կոշիկների, մահուղի  
և այլն ապրանքների, մենք, իհարկէ, կարող ենք ապ-  
րել: Բայց յեթե մենք չկարողանանք շինել մահուղ  
գործող մեքենաներ, արտադրել պողպատ, յերկաթ ու  
գործարանական գործիքներ և յեթե արտասահմանյան

կապիտալիստական պետութեանները մերժեն մեզ  
տալու այդ բոլորը, այն ժամանակ մենք կը մնանք առանց  
ձեռքի և մեր արդյունաբերական կյանքը բոլորովին  
կը կանգնի:

Ահա այս է պատճառը, վոր մենք մեր առաջ  
դրել ենք յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրը, վո-  
րով պետք է սովորենք շինել մեքենաներ ու գործիք-  
ներ ու դրանց ոգնութեամբ արտադրել բոլոր մեզ  
հարկավոր ապրանքները:

Տնայնագործական արդյունաբերութեանը յերկրի  
ինդուստրիալիզացիայի գործում պետք է ոգնի Պետ-  
արդյունաբերութեանը, իր ձեռքի տակ ունեցած բոլոր  
միջոցներով: Նա պետք է մատակարարի շուկային իր  
արտադրած ապրանքները: Սա առաջին խնդիրն է, վոր  
բղխում է այն հանգամանքից, վոր պետութեանը մո-  
տակա ժամանակաշրջանում պետք է խոշոր արդյու-  
նաբերութեան մեջ մտցնի մեծ քանակութեամբ մի-  
ջոցներ:

Տնայնագործութեան յերկրորդ խնդիրը ինդու-  
ստրիալիզացիայի միջոցին պետք է լինի՝ զարգացնել  
արտադրութեան այն ճյուղերը, վորոնք պատրաստում  
են շինութեան նյութեր — աղյուս, կիր, կավ, քար և  
այլն:

Վերջապես ինդուստրիալիզացիայի շրջանում տը-  
նայնագործութեան յերրորդ խնդիրը պետք է լինի —  
զարգացնել այն արհեստանոցներն ու գործարանները,  
վորոնք արտադրում են արտասահման արտահանելու  
համար ապրանքներ: Տնայնագործ արդյունաբերու-

Թյունը տալով իր ապրանքները արտահանութեան ու արտասահմանում ծախելու համար, վորոշ չափով ոգնում է Խորհրդային իշխանութեանը — ավելացնելու պետական վոսկու պաշարը, վորով կարելի կլինի այնտեղ ձեռք բերել անհրաժեշտ սարգ ու կարգ մեր մեքենայագործ գործարանների համար:

Ահա սրանք են մոտավորապես այն խնդիրները, վոր կապված են յերկրի ինդուստրիալիզացիայի հետ և դրված են տնայնագործական արդյունաբերութեան առաջ — կատարելու համար: Միակ միջոցը, վորով կարելի կլինի իրագործել այս բոլոր խնդիրները — կոոպերացիան է: Ուրեմն այս տեղ ել արդյունաբերական կոոպերացիան հանդիսանում է վորպես Խորհրդային իշխանութեան անմիջական ոգնական յերկրի ինդուստրիալիզացիայի գործում: Այս խնդիրների հետ միասին Արդյունաբերական կոոպերացիայի վրա, ինչպես մի ամբողջ աշխատավոր մասսայի կազմակերպութեան վրա, ընկնում է խոշոր պարտականութիւն — տարածել ինդուստրիալիզացիայի փոխառութիւնը իր անդամների մեջ:

### ՏՆԱՅՆԱԳՈՐԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱԳՈՐԾՈՒՄԸ:

Յերկրի ինդուստրիալիզացիան և դրա հետևանքով առաջ յեկած խնդիրները, վոր դրված են տնայնագործութեան և արդյունաբերական կոոպերացիայի առաջ, պահանջում են բարելավել տնայնագործական ապրանքների արտադրութեան յեղանակն ու ձևը:

Այս խնդիրը կարելի յէ լուծել այն ժամանակ, յերբ տնայնագործների արհեստանոցները մեքենայացման յենթարկվեն և նրանց աշխատանքը համաչափութեան:

Արհեստանոցների մեքենայացման հարցը վաղուց է դրված արդյունաբերական կոոպերացիայի առաջ: Նրա հիմնական խնդիրներից մեկն է — հեշտացնել տնայնագործի ծանր աշխատանքը: Այս հողի վրա արդյունաբերական կոոպերացիան Խորհրդային իշխանութեան ոգնութեամբ շատ գործեր է կատարել: Փոքրիկ ելեքտրոկայարանների ու գործարանների շինութեան և արհեստանոցների մեքենայացման որինակներ շատ կան մեր առաջ:

Պետութիւնը իր կողմից գնահատելով տնայնագործութեան մեքենայացման անհրաժեշտութիւնը, հանձնել է արդյունաբերական կոոպերացիային 150 գործարան, իրենց բոլոր սարգ ու կարգով, վոր դրան հատվում է մոտավորապես 4 միլիոն ռուբլի: Բացի այդ ժողովրդական տնտեսութեան բարձրագույն խորհուրդը կազմակերպել է մեծ թվով արհեստանոցներ ու բացել է ուսումնարաններ, վորտեղ տնայնագործները սովորում են լավագույն յեղանակով աշխատել ու վարժվել արհեստների մեջ:

1927 թվի հոկտեմբերի 1-ին Համառուսական արդյունաբերական կոոպերացիայի միութեան մեջ մտնում է յին մոտ 569 ձեռնարկութիւններ — 69 հազար տնայնագործ անդամներով, ըստ վորում ամեն մեկ արտելի մեջ աշխատում է յին միջին թվով 116 մարդ:

Այս ամենը ցույց է տալիս, վոր մենք ներկայումս արդեն ունենք, վոչ թե առաջվա նման մանր արհեստանոցներ, այլ ամբողջ ձեռնարկություններ, վորոնք մոտ են կանգնած ու նմանվում են պետական գործարաններին: Պավլովի արտելում աշխատում են մոտ 700 մարդ, Բիտոշևի չուգունի հալարանի արտելում — 750 անդամ, Մոսկվայի զանազան արտելներում 200-ից մինչև 400 անգամ և այլն: Այս արտելներում տնայնագործ-անդամների աշխատանքների պայմանները նույնն են, ինչ վոր պետական գործարաններում բանվորների պայմանները:

Վոչ միայն մեքենայացնելով է աշխատում արդյունաբերական կոոպերացիան զարգացնել տնայնագործի արտադրությունը, այլ և բոլոր հնարավոր միջոցներով: Կոոպերացիայի մեջ մտնում են դեռ ևս մեծ քանակությամբ մեքենայացման չյենթարկված ընդհանուր արհեստանոցներ, վորտեղ աշխատում են բացառապես արտելի անդամներ: Այս արհեստանոցներում գործը բաժանված է անդամների մեջ այնպիսի ձևով, վոր հնարավոր լինի արտադրել բարձր տեսակի և մեծ քանակությամբ ապրանքներ: Յեվ, իսկապես, յեթե կոշիկակարների արտելում անդամների մի մասին հանձնված լինի միմիայն կոշիկների յերեսի կաշին ձեռքերը կաղալարի վրա, մյուս մասին կրունգներ պատրաստելը, յերորդին գարշապարները (պաղոշը) կըպցնելը, չորրորդին կոշիկների կաշին ձևելը և այլն, այն ժամանակ պատրաստած կոշիկների և քանակությունը կլինի շատ և հատկությունը բարձր: Ամեն մի խումբ

կատարելով մշտական մի տեսակ գործ՝ ավելի ևս կըփորձվի ու կմասնագետանա այդ գործի մեջ:

Այսպիսի ընդհանուր արհեստանոցներ Համառուսական արդյունաբերական կոոպերացիայի միության մեջ կան 1405 հատ 21.876 անդամներով, յեթե այժմ սրա վրա ավելացնենք մեքենայացրած արհեստանոցների թիվը և համեմատենք բոլոր արտելների ընդհանուր թվի հետ — կատանանք հետևյալ պատկերը՝

1927 թ. հոկտեմբերի 1-ին ունեյինք

կոոպերատիվային արտելներ . . . . .	3.930
Նրանց մեջ անդամներ . . . . .	338.714
Ընդհանուր արհեստանոցներ . . . . .	1.998
Նրանց մեջ անդամներ . . . . .	90.943

Ուրեմն կոոպերատիվների կեսից ավելին կազմում յեին ընդհանուր արհեստանոցները և նրանց մեջ աշխատում էյին կոոպերացման յենթարկված տնայնագործների մեկ յերորդ մասը:

Խորհրդային իշխանությունը նպաստելով արդյունաբերական կոոպերացիային մեքենայացման յենթարկել տնայնագործությունը, դրանով հեշտացնում է արհեստավորների ծանր վիճակն ու աշխատանքը: Մյուս կողմից արդյունաբերական կոոպերացիան կազմակերպելով ընդհանուր արհեստանոցներ — տնայնագործին անհատական աշխատանքից մղում է դեպի հավաքականը և դրանով ամրացնում նրա տնտեսական գրությունը:

Յեթե սրա վրա ավելացնենք նախահաշվի ու նախազրծի սկզբունքը, այն ժամանակ բոլորովին պարզ

կլինի մեզ համար, վոր արդյունաբերական կոոպերացիան, կազմակերպելով ու զարգացնելով հավաքական աշխատանք, կհեշտացնի պետութեան գործը զեղջելու տնայնագործութեան արտադրութեանը և հում նյութերի կարիքը:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՄՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԻՆ ԴՍՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Արդյունաբերական կոոպերացիայի խնդիրները Սոցիալիզմի կառուցման գործում սպառած չենք լինի, յետե չը հիշենք նրա կատարելիք աշխատանքի և մի ուրիշ եսական կողմը:

Մինչև հիմա մենք խոսում եյինք միմիայն արդյունաբերական կոոպերացիայի տնտեսական գործունեութեան մասին: Մեր բոլոր ասածներից պարզվեց, վոր արդյունաբերական կոոպերացիան Խորհրդային հանրապետութեան մեջ հանդիսանում է իբր մի իսկական միջոց Սոցիալիզմի կառուցման գործում:

Արդյունաբերական կոոպերացիայի տարած աշխատանքը միմիայն տնայնագործների տնտեսական դրութեան բարելավման համար չէ, այլ և նրանց մշտավոր մակարդակը բարձրացնելու համար է:

Ինչի՞ համար պետք է կոոպերացիան զբաղվի կուլտ-կրթական գործով—թող տնայնագործները ընդհանուր արհեստանոցներում նստած արտադրեն անհրաժեշտ ապրանքներ և ուրիշ վոչինչ: Յավոք սրտի յերբեմն այսպիսի մաքեր եյին արտահայտում մեր կոոպերատիվային գործիչներից վումանք, յետե վոչ

բացարձակորեն—գոնե իրենց շրջանում: Իհարկե այսպիսի մտքերը ուղիղ չեն: Թե ինչպես եր նայում էինք կոոպերացիայի կուլտ-կրթական աշխատանքներին—ահա նրա խոսքերը՝

«Կոոպերացման յենթարկելու որով մենք կանգնած կը լինենք ջուխտ վոտքով սոցիալիստական հողի վրա: Լրիվ կերպով կոոպերացման յենթարկելու համար պետք է զեղջել գյուղացիութեան (ժողովրդի այդ խոշոր գանգվածի) կրթութեանը և աչքի առաջ ունենալ, վոր այդ կոոպերացումը անհնար է առանց կրթական հեղափոխութեան» (հատոր XVIII, մասն 2, յեր. 145):

Ուրեմն կոոպերացիայի կուլտ-կրթական աշխատանքը մի անհրաժեշտ գործ է, վոր պետք է կատարել: Իհարկե կուլտ-կրթական աշխատանք չի կարելի ստեղծել առանց փողի, բայց դրա համար հարկավոր է միջոցներ գտնել: Յետե կոոպերատիվը տնտեսապես ուժեղ է և չի մտածում իր անդամների կրթութեան մասին—նա արժանի չէ կոոպերատիվ կոչվելու:

Ինչ է՞ նշանակում բարձրացնել անդամների կուլտուրական մակարդակը: Դա նշանակում է արտելները անդամներին դաստիարակել այնպես, վոր նըրանցից ամեն մեկը հետաքրքրվի իր արտելի գործերով, ակտիվ կերպով մասնակցի իր արտելի վարչական աշխատանքներին, հետաքրքրվի վոչ միայն աշխատանքներով—այլ և նրանց վորակով և հակի ծախքերի կանոնավոր կատարվելու վրա: Մի խոսքով արդյունաբերական կոոպերացիան պետք է կարողանա

վոչ միայն տնայնագործ անհատներին համախմբել արտերևների մեջ, այլ և սովորեցնել նրանց կառավարելու իրենց ընդհանուր տնտեսությունը: Մենք արդեն ասել ենք, վոր կոոպերացիան պետք է կռիվ մղի տնայնագործների «գնորդներ» կամ «ձեռնարկողներ» դառնալու ցանկության դեմ, ուրեմն կոոպերացիան իր անդամների մեջ պետք է զարթեցնի ձգտում ու հետաքրքրություն դեպի հասարակական աշխատանքը: Հազիվ թե վորևէ մեկի համար կասկածելի լինի այն ճշմարտությունը, վոր հետաքրքրությունը դեպի հասարակական կոոպերատիվ գործը—ինքնաշխատ տնայնագործին կը դարձնի կուլեկտիվիստ արհեստավոր ու կսկսի նա մտածել բացի իր շահերից և հասարակական շահերի մասին:

Արդյունաբերական կոոպերացիան իր վարչությունների ու վերաստուգիչ հանձնաժողովների միջոցով քիչ տնայնագործներ չի քաշել դեպի հասարակական աշխատանքը: Յեթե հաշվի առնենք, վոր Համառուսական Արդյունաբերական կոոպերացիայի միության մեջ մտնում են 3940 կոոպերատիվներ, վորոնցից ամեն մեկում աշխատում են 3 վարչության և 3-ել վերաստուգիչ հանձնաժողովի անդամներ, այն ժամանակ կը ստանանք 23 հազար ակտիվ անդամներ: Սա դեռ լրիվ թիվը չէ այն տնայնագործների, վորոնք կոոպերացիայի միջոցով հասարակական աշխատանքի յեն դրված: Կուլտ-կրթական հանձնաժողովների, այլ և այլ կրուժոկների, ակումբների, ընթերցարանների և

այլ կազմակերպությունների մեջ աշխատում են մեծ թվով տնայնագործներ:

Բացի այդ Արդյունաբերական կոոպերացիան ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Պորհրդի և Լուսավորության ժողովրդական կոմիտարիատի հետ միասին շարունակ աշխատանքներ է տանում տնայնագործների կրթության գործում: Ներկայումս մենք արդեն ունենք հինգ տնայնագործական տեխնիկումներ, յերեկոյան համալսարան, հրահանգիչ դպրոցներ, պրոֆտեխնիկական ուսումնարաններ ու զանազան նույնանման կուրսեր: Կոոպերացիաները կազմակերպում են եքսկուրսիաներ դեպի Պորհրդային Միության զանազան շրջանները, տնայնագործներին ծանոթացնելու համար այդ շրջանների կյանքի և աշխատանքի հետ:

Տնայնագործներն ունեն իրենց մասսայական լրբադիրը—„Кустарь и артель“ և տեխնիկական ամսաթերթը—„Промысла и ремесла“:

Այս կուլտուրական աշխատանքը, վոր հնարավոր է կատարել միայն այն դեպքում—յերբ կոոպերատիվային կազմակերպությունները կընդգրկեն տնայնագործների լայն խավերը, մեծ գրավական կը հանդիսանա այդ ինքնաշխատ մարդկանց մտավոր մակարդակը բարձրացնելու գործում Արդյունաբերական կոոպերացիայի հիմնական խնդիրը կուլտ-կրթական գործում կայանում է նրա մեջ, վոր այդ աշխատանքը չը սահմանափակվի միայն կոոպերատիվների շուրջը: Կոոպերացիան սկզբում տնայնագործներին քաշելով

դեպի իրենց արտելները անտեսության բարեխափման գործը, նա պետք է սովորեցնի նրանց հետաքրքրվել և հասարակական խնդիրներով: Յեթե ներկայումս Խորհրդային իշխանության կատարած գործը գրավում է դեպի իրեն տասնիակ և հարյուր հազարավոր մարդկանց ուշադրությունը, այն մարդկանց վորոնք առաջ բոլորովին անտարբեր եյին, նշանակում է, վոր ժողովրդի լայն խավերը արդեն քաշված են դեպի սոցիալիստական շինարարությունը: Այստեղ մենք նորից պետք է կրկնենք, վոր սոցիալիզմը մեզանից շատ հեռու կանգնած մի գաղափար չէ ու Խորհրդային իշխանության բոլոր ճյուղերի փորձնական աշխատանքների մեջն է կայանում նրան մոտենալու ամենալավ միջոցը:

«Այլ բան է յերևակայել բանվորական միությունների մասին սոցիալիզմի շինարարություն գործում և այլ բան սովորել փորձնական ձևով կառուցել սոցիալիզմ այնպես, վոր ամեն մի գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը» (Վ. Ի. Լենին «Կոոպերացիայի մասին» հատ. XVIII, մ. 1, յեր. 220)-

Ամեն մի գործունի անդամ աշխատելով իր արտելում, անպայման կարող է դառնալ և գործունի քաղաքացի:

Վորպեսզի հնարավոր լինի մասնակցել հասարակական աշխատանքներին, նախ և առաջ հարկավոր է ունենալ ազատ ժամանակ: Այստեղ արտելի անդամներից շատերը կարող են ասել—թե վորտեղ գտնենք ազատ ժամանակ, յերբ աշխատում ենք որակյան 12-ից 14 ժամ:

Անկասկած այս հարցը արդարացի հարց է: Տընայնագործի որակյան աշխատանքի ժամերը ավելի շատ են քան բանվորինը, բայց արդյոք արդյունաբերական կոոպերացիան այս հարցում դիմում է վորևէ միջոցի—թե վոչ: Իհարկե դիմում է: Մենք վերևում հիշեցինք, վոր 3930 կոոպերատիվային արտելներից—1998-ը աշխատում են ընդհանուր արհեստանոցներում: Սրանցից 593-ը խոշոր գործարաններ են: Այս ընդհանուր արհեստանոցներում և գործարաններում տընայնագործը աշխատում է որակյան 8 ժամ, այն ինչ նույն տնայնագործը յերբ առանձին իր համար եր գործ անում, աշխատում եր շատ ավել քան 8 ժամ:

Չը նայելով սրան, տնայնագործների մեծ մասը դեռ ևս չեն աշխատում գործարաններում ու ընդհանուր արհեստանոցներում, այլ ամեն մեկը իր համար, և պետք է խոստովանվենք, վոր սրանց աշխատանքի ժամերը կրճատելու համար դեռ քիչ բան է արված: Իհարկե այս հարցում ևս կարգ ու կանոն մտցնողը դարձյալ արդյունաբերական կոոպերացիան պետք է լինի: Նիժեգորոդի և Մոսկվայի նահանգներում արդյունաբերական կոոպերացիան արդեն բարձրացրել է այս հարցը և, իհարկե, ցանկալի հետևանքներ կը ստացվեն միայն այն ժամանակ, յերբ իրենք տնայնագործ ները կը նպաստեն այս հարցի դրական լուծմանը:



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՅԻ ՊԱՅՔԱՐԸ  
ՄԱՍՆԱՎՈՐԻ ԴԵՄ—ՈԳՆՈՒԹՅՈՒՆ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Արդյունաբերական կոոպերացիան տանելով ահա-  
զին քանակութեամբ անայնագործներ դեպի սոցիա-  
լիստական շինարարութիւնը, չը պետք է զանց առնի  
Սորհրդային իշխանութեան թշնամիներին: Գտնվելով  
Սորհրդային յերկրում և աշխատելով կոոպերացիայի  
մեջ, չի կարելի աչքաթող անել վոչ մի խնդիր, վորը  
գնում է Սորհրդային իշխանութիւնը:

Մոտակա ժամանակաշրջանում արդյունաբերա-  
կան կոոպերացիայի առաջ դրված է մի մեծ խնդիր  
ևս—կռիվ մասնավոր դրամագլխի դեմ: Ո՞վ է մաս-  
նավորը—յերևի ամենքն էլ նրան լավ կճանաչեն: Նա  
մի այնպիսի փոքր կապիտալիստ է, վորը աշխատում  
է ոգտագործել միայն իր համար տնայնագործների  
արտադրութեան բոլոր պտուղները կամ նրանց ապ-  
րանքների առ ու ծախսը: Նա մի մասնավոր ձեռնար-  
կող է, վոր թեև ունի արհեստանոց՝ բայց ինքը ան-  
ձամբ չի աշխատում, այլ աշխատեցնում է այնտեղ  
ուրիշ տնայնագործներ: Մասնավորի հասցրած վնասն  
ու չարիքը կայանում է նրա մեջ, վոր տնայնագործ-  
ների աշխատանքից ստացված ոգուտը ամբողջովին  
մտնում է նրա գրպանը:

Պատահում է վոր կոոպերատիվի համար ապրանք  
արտադրող արտելի անգամը, համեմատելով իր աշ-  
խատանքը իր հարեան տնայնագործի աշխատանքի  
հետ, վորը գործում է մասնավորի համար, վոչ մի

զանազանութիւն չի նկատում իր և իրեն հարեանի  
մեջ: Ինքն էլ է աշխատում ամբողջ որը, իր հարեանն  
էլ ու վոչ ինքն է հարուստ—վոչ հարեանը: Չնայած  
այս արտաքին յերևույթին, նրանց աշխատանքի մեջ  
մեծ զանազանութիւն կա և այդ զանազանութիւնը  
նկատելի է դառնում տարվա վերջը: Յերբ տարին  
վերջանում է արտելի անգամը ունի ոգուտ, վոր  
մնում է արտելի մեջ՝ և գործը մեծացնում է ու  
դարգացնում: Ինքնաշխատ տնայնագործը վոչինչ չու-  
նի, քանի վոր նրա վաստակը մտել է մասնավորի  
գրպանը: Յեթե բոլոր արտելների ստացած ոգուտ-  
ները գումարենք 1926-27 թվի համար կստանանք,  
Համառուսական արդյունաբերական կոոպերացիայի  
միութեան հաշիվներով, 6 միլիոն 747 հազար ուրբլի:

Մասնավորը կոոպերացիայի թշնամին է վոչ  
միայն նրա համար, վոր նա խլում է կոոպերացիայի  
ձեռքից ոգուտը, այլ և նրա համար, վոր կոոպերա-  
ցիան համախմբելով ինքնաշխատ տնայնագործներին,  
մղում է նրանց դեպի սոցիալիզմի կառուցման գործը,  
այն ինչ մասնավորը սոցիալիզմի հակառակորդն է:  
Պարզ է վոր, վորքան խորանա կոոպերացիայի աշ-  
խատանքը տնայնագործութեան մեջ, այնքան էլ պետք  
է պակասի մասնավորի հույսը ապրել այնպես, ինչպես  
ապրում էր առաջ ուրիշների հաշիվին:

Մասնավորը վնասում է արտելների անգամներին  
և նրանով, վոր գնում է ինքնաշխատ տնայնագործնե-  
րի արտադրած ապրանքները ամբողջովին. առանց  
ուշադրութիւն դարձնելու այդ ապրանքների հատկու-

Թյան վրա: Ինչո՞ւ ե նա այսպես անում և միթե նրան ձեռնառու ե վատ հատկության ապրանքներ գնել: Հարցը շատ պարզ ե—նա վատ տեսակի ապրանքները առնում ե եժան գնով ու ծախում ե լավի տեղ թանգ գնով: Ժողովուրդը գնելով տնայնագործական ապրանքները ու տեսնելով նրա վատ հատկությունը, ապագայում փախուստ ե տալիս այդ ապրանքների գործածությունից: Սրանից հետո յեթե յերբեկիցե նա դիմում ել ե արդյունաբերական կոոպերացիային—մեծ կասկածանքով ե նայում տնայնագործական ապրանքների վրա ու սրանից, իհարկե, վնասվում ե կոոպերացիայի առևտուրը և արհեստավորը մնում ե առանց գործի: Շատ անգամ տնայնագործներն ու արտելի անդամները չեն կարողանում ըմբռնել մասնավոր առևտրականի պատճառած վնասը ու մոռանում են, վոր նա իրանց աշխատանքով հարուստանում ե և միաժամանակ շուկան փչացնում:

Այս բոլորից հետո պարզ ե, վոր մասնավոր առևտրականը կոոպերացիայի թշնամին ե, քանի վոր նա խլում ե կոոպերացիայի 6 միլիոն ըուբլի արդյունքը և ապա փչացնում ե շուկան:

Վերջապես ամեն մի արտելի անդամ պետք ե հասկանա, վոր յեթե իրենց արտելը լավ ե կառավարվում—նրա աշխատանքը թեթևանում ե, մեքենաների թիվը ավելանում ու հում նյութերը առատանում և սպառումն ել մեծանում ե: Մի խոսքով նրա գործը զարգանում ե և նա յերբեք պարտապ չի մնում: Այսպես չի մտածում մասնավորը, քանի վոր նա միայն

անում ե այն, ինչ վոր իրեն ե ձեռնառու: Մասնավորը հենց վոր տեսավ ուրիշ գործի ավելի մեծ շահը, թեթև սրտով իսկույն թողնում ե իր համար աշխատող մարդկանց բազդի յերեսին ու վազում ե դեպի այդ նոր գործը: Սրա հետևանքը լինում ե այն, վոր տնայնագործը ստիպված ե լինում նստել պարտապ ու առանց փողի: Արդյունաբերական կոոպերացիան կռիվ մղելով մասնավորի դեմ իր ձեռքի սակ ունեցած բոլոր ուժերով ու միջոցներով, ոգնում ե պետությանը ամբացնելու Խորհրդային անտեսությունը և մաքրում ե սոցիալիզմի վերջնական հաղթության ճանապարհը:

ՎՈՐՏԵՂ Ե ԱՌԱՆՁԱՊԵՍ ՀԱՐԿԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ:

Մեր բոլոր ասածներից պարզվեց, վոր արդյունաբերական կոոպերացիան համախմբելով ինքնաշխատանհասներին, ամնում ե նրանց դեպի սոցիալիզմի կառուցման գործը: Բացի սրանից նա ունի իրագործելու և ուրիշ խնդիրներ: Բանը նրանումն ե, վոր հասարակության մեջ կան խավեր, վորոնք վաղուց ՚ի վեր լիակատար իրավունքի տեր մարդիք չեյին համարվում: Ահա այսպիսի քաղաքացիների մասին ե, վոր արդյունաբերական կոոպերացիան պետք ե մտածի ու իրավազրկությունից հանի նրանց:

Չ Ք Ա Վ Ո Ր Ն Ե Ր Ը:

Չքավորները, վոր ցարի կառավարության որով հնարավորություն չունեյին պահպանել իրանց գոյու-

Թյունը ու ամենքի կողմից ատելի մարդիք եյին դարձել, Խորհրդային Իշխանութեան որով առանձին ուշադրութեան են արժանացել: Ինչո՞ւ ե սա այսպէս: Վերոյիշեալ չքավորները նախ կազմում են ժողովրդի մեծ մասը և ապա նրանք կարիք են զգում ոգնութեան: Յեթե մենք հասարակութեան, ամենից առաջ չքավորութեան համար չստեղծենք այնպիսի պայմաններ, վոր նրանք բացի հացի խնդրից կարողանան մտածել և ուրիշ գործերի մասին—մենք չենք կարող հաջողութեամբ կառուցել սոցիալիզմ: Ահա այս տեսակետից արդյունաբերական կոոպերացիայի առաջ դրված են մի շարք խնդիրներ: Արդյունաբերական կոոպերացիան ոգնելով չքավորներին համախմբել կոոպերացիայի մեջ, տալով նրանց արտոնութեաններ մատակարարման գործում, ձեռք բերելով նրանց համար մեքենաներ և այլն—հնարավորութեան ե տալիս նրանց վտառի կանգնել ու ապրել նոր ձևով: Մասնավորը բնականաբար աշխատում ե միշտ անբարեկեցիկ չքավորներին, վոր իրեն համար ստեղծի բանվոր ույժ և ի հարկէ՝ արդյունաբերական կոոպերացիայի խնդիրն ե—խլել չքավորներին նրա ձեռքից: Ուրեմն Արդյունաբերական կոոպերացիան պարտավոր ե կազմակերպել չքավորներին և նրանց միջոցով վոչնչացնել մասնավորին: Վորքան շատ չքավորներ կարողանա քաշել կոոպերացիան գեպի իր շարքերը, այնքան շուտ կմոտենա նա իր նպատակին ու կոզնի Խորհրդային Իշխանութեանը կառուցելու սոցիալիզմ:

#### Կ Ա Ն Ա Յ Ք:

Յեթե չքավոր տղամարդիք ճորտ են դարձել աղքատութեան ու մասնավորների ձեռքում, չքավոր կանայք դրա հետ միասին մասնաված են մթութեան, մոռացութեան և իրենց ամուսինների քմահաճույքին:

Կան բազմաթիվ արտելներ, վորտեղ աշխատում են բացառապէս կանայք, որինակի համար Յելեցի ասեղնագործները, Բասկազովսկի գուլպա գործողները, Նովգորոզի կար ու ձե անողները: Մեր կուսակցութեանը և Խորհրդային Իշխանութեանը իմանալով գեղջկուհի կնոջ ծանր տնտեսական դրութեանը, դարձնում ե նրանց աշխատանքին առանձին ուշադրութեան: Արդյունաբերական կոոպերացիան—ամենալավ միջոցն ե կնոջը քաշելու գեպի հասարակական աշխատանք: Հեշտ չե իսկապէս տանախրուհու համար—պոկվել իր տան գործերից: Հեշտ չե նրա համար, վոր նրա կյանքը այնպէս ե դասավորված, վոր նա վոչ մի բոպե ազատ ժամանակ չունի: Յերեխաները, խոհանոցը, անտեսութեանը և սրա վրա ավելացրած նրա մթութեանն ու անկրթութեանը, թույլ չեն տալիս անայնագործ կնոջը հաղթահարել իր առջև կանգնած բոլոր արգելքներին: Յեւ ի հարկէ հասարակական գործերի համար նա այլևս չի կարողանում մտածել, այլ զբաղված ե իր տան հոգսերով և ստիպված ե ամբողջ որերով նստել իր տանը և քարշ գալ իր տնտեսութեան հետեից:

Արդյունաբերական կոոպերացիան իր առաջ հարց ե դրել՝ ոգնել կնոջը հաղթահարելու այս արգելքներին:

Կազմակերպելով տնարարութեան և գրագիրութեան կրուժովներ, մանկապարտեզներ, մսուրներ և այլն, կոոպերացիան հնարավորութեամբ և տալիս կնոջը վորջ չափով ազատվել տնական անվերջ աշխատանքներից: Կազմակերպելով կանանց արտելներ, արդյունաբերական կոոպերացիան բացում և կնոջ առաջ լայն ճանապարհ դեպի մի նոր ավելի բովանդակիչ կյանք: Աշխատելով արտելների վարչութիւններին և վերաստուգիչ հանձնաժողովների մեջ, կինը սովորում և կառավարել վոչ միայն իր սեփական գործը, այլ և հասարակական անտեսութեանը: Սովորում և նայել իր վրա ինչպես Սորերգային պետութեան գործունի քաղաքացու վրա:

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԾԱՅԻՐԱԳԱՎԱՌՆԵՐԸ:

Ինչ վոր մենք ասեցինք չքավոր գասակարգի ու կանանց մասին, նույնը կարող ենք ասել և այն արհայնագործների մասին, վորոնք աշխատում են թաթարական, Չուվաշական, Իազասանի և այլ Հանրապետութիւններում, նույնպես և Սորերգային Միութեան ծայրագավառներում: Բայց այստեղ կա և մի այլ բան:

Այս շրջաններում չկա պետական խոշոր արդյունաբերութիւն: Այստեղ անաշխատեցողական արտագրութիւնը յերկու անգամ ավելի և պետականից, հետևաբար ժողովրդի գլխավոր զբաղմունքը անաշխատեցողութեանն է: Իրերի այսպիսի դրութիւնը արդյուն-

նաբերական կոոպերացիայի առաջ դնում և առանձին կարևոր խնդիրներ: Այստեղ արդյունաբերական կոոպերացիան միակ կազմակերպութիւնն է, վոր համախմբում և ինքնաշխատ անհատներին, քաշում և նրանց դեպի հասարակական աշխատանքը, բարձրացնում և նրանց մտավոր մակարդակը, մատակարարում նրանց ամենալավ գործիքներ ու մտցնում նրանց արհեստանոցներին մեջ սեփական նոր ձևեր:

### ՀԱՍՐԱՎՈՐ Ե ԱՐԵՅՈՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՆՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՌԱՆՅ ԽՈՐՀՐԴՅՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ:

Այն բոլորը, ինչ վոր ասեցինք, կազմում և արդյունաբերական կոոպերացիայի իմաստը և հնարավոր և բրազործել միայն Սորերգային Իշխանութեան սրով: Կան այնպիսի տնաս մարդիք վորոնք կարծում են թե Սորերգային Իշխանութիւնը այստեղ գեր շունի և ամբողջ ույժը հենց իրեն կոոպերացիայի մեջ և կայանում: Նրանք առարկում են, վոր արդյունաբերական կոոպերացիան գոյութիւն ունեն և մինչև հոկտեմբերյան հեղափոխութիւնը: Մենք նրանց կպատասխանենք, վոր—այո, իսկապես կար կոոպերացիայի մինչև Սորերգային Իշխանութիւնը ու ցարական կազմի սրով ել անաշխատեցողները յերբեմն կազմում եյին արտելներ: Ամենքին յերեկ հայտնի կլինի Պավլովի մետաղագործական արտելը, վոր կազմվել և Սորերգային Իշխանութիւնից առաջ: Կան և ուրիշ արտելներ կազմակերպված մինչև 1917 թվի հոկտեմբերը:

Այժմ հարկավոր է վերոշել թե՛ ինչ գանազանու-  
թյուն կա առաջվա և այժմյան արտեղների պայման-  
ների ու ելուժյան մեջ:

Յեթե նայենք այն արտեղներին, վորոնք կազմ-  
վել են պատերազմից առաջ, մենք կտեսնենք, վոր  
նրանց թիվը նախ շատ քիչ էր—մոտ 200 արտել ամ-  
բող Ռուսաստանում: Յեվ ապա այդ արտեղները կամ  
շարունակ գտնվում էին քանդվելու վտանգի տակ,  
կամ դառնում էին մասնավոր կապիտալիստական  
ձեռնարկուժյուններ, այսինքն այժմյան լեզվով ստած  
սուտ կոտլերատիվներ: Ինչո՞ւ էր այս բանը առաջ  
գալիս: Միայն մի պատասխան կարող է լինել սրան—  
գայլերի հետ վոր ապրես, գայլի նման կոճնաս: Կո-  
պերատիվային արտելը չէր կարող յերկար զիմանալ  
կապիտալիստական ձեռնարկուժյունների շրջապատի  
մեջ: Առանց արտաքին ոգնուժյան այսպիսի արտելը  
մրցման ազդեցության տակ խեղդվում ու կորչում էր  
և յեթե նրան հաջողվում էր մի կերպ զիմանալ,  
այնուամենայնիվ նա մնում էր ճնշված դրուժյան մեջ:  
Յենթադրենք, վոր այսպիսի արտելը գործադրելով  
համառ աշխատանք, կրելով ամեն տեսակ զրկանքներ,  
սով, անքնություն և այլն, կարողացել է մի վորևե  
զիրք ձեռք բերել իր համար ու կանոնավոր աշխա-  
տանք վարել: Յեվ անա գալիս է մի նոր մարդ և  
լնդրում է վերջնել իրեն այդ արտելի մեջ: Սա կարող  
էր արդյոք նրան ընդունել—հաղիվ թե, քանի վոր նա  
վոչ մի զրկանք ու աշխատանք չի տարել և գալիս է  
պատրաստ գործի վրա և ուզում է սզավել ուրիշնե-

րի աշխատանքի պտուղներով ու բարիքով: Սրա հա-  
մար էլ դժվար է յերևակայել, վոր արտելը կվերցնե  
այդ նոր մարդուն: Ավելի շուտ կարելի է յենթադրել,  
վոր արտելը կվարձեր նրան իբր ոտճիկ ստացող բանվոր  
և չէր տալ նրան մասն իր կայքից ու դրամագլխից:

Այժմ ասենք թե, այդ արտելը շարունակում է  
զարգանալ ու տնտեսաբար ամրանալ, արդյոք ինչ  
կանեյին նրա անդամները—կվարձեյին յերկրորդ  
մարդուն, ապա յերրորդ, չորրորդ և այլն:

Այսպիսով արտելի ձեռնարկության մեջ կամաց  
կամաց կմաներ վարձու աշխատանքը և նա կկորցնե  
իր կոտլերատիվային բնավորությունը: Արտելի ան-  
դամները կդառնային շահագործողներ:

Կարճը էր արդյոք արտելը առանց Խորհրդային  
իշխանության աշխատել այնպես, ինչպես աշխատում  
է կոտլերատիվային արտելը: Իհարկե չէր կարող—  
նա կամ կմեռներ, կամ կդառնար մի վորևե կապի-  
տալիստական ձեռնարկուժյուն, վորտեղ նրա հին ան-  
դամները հեռոցհեռ բերելով նոր վարձկան ուժեր՝  
կդառնային շահագործողներ:

Ինչպես տեսնում ենք առաջ էլ կար կոտլերացիա,  
բայց նրա նշանակությունն ու միաքր բուրովին ու-  
րիշ էր: Նա հարուստ մարդկանց ձեռքում ծառայում  
էր իբրև միջոց շահագործելու ուրիշներին: Նախապա-  
տերազմյան արդյունաբերական կոտլերացիան կանդ-  
նած էր այն հողի վրա, ինչ հողի վրա վոր կանգնած  
էր կապիտալիստական հասարակությունը: Ուրեմն  
կապիտալիստական հասարակության մեջ չէր կարող

լինել իսկական արտելային ընտանիք, քանի վոր նա միշտ պետք է ձգտեր հարուստանալ և ապրել ուրիշների հաշվին:

Վ. Ի. Լենինը մերկացնում ու պախարակում եր այն մարդկանց, վորոնք կարծում էյին, թե կապիտալիստական յերկրում հնարավոր է ունենալ վոչ կապիտալիստական կոոպերացիա:

## Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ:

Այն բոլորը, ինչ վոր ասեցինք այս գրքում, ներկայումս իրագործվում է Արդյունաբերական կոոպերացիայի կողմից: Միացնելով բաժան բաժան յեղած անայնագործներին, կազմակերպելով կոլեկտիվներ և մեքենայացման յենթարկելով նրանց ձեռնարկությունները—արդյունաբերական կոոպերացիան իրագործում է յուր անտեսական խնդիրները: Բարձրացնելով տրնայնագործարհեստավորների կրթության մակարդակը, պայքարելով կնոջ մթության ու անշարժության դեմ, հեշտացնելով նրանց մուտքը կրթական կազմակերպությունների մեջ, քաշելով նրանց դեպի հասասակական աշխատանքը—արդյունաբերական կոոպերացիան իրագործում է յուր կուլտ-կրթական խնդիրները:

Ստեղծելով ծրագրված անտեսություն և միասնական ձե ու դասավորություն, սկսած արտելից մինչև Համառուտական միությունը, — արդյունաբերական կոոպերացիան իրագործում է յուր խնդիրները փողովրդական ամբողջ անտեսությունը ծրագրելու ու նախագծելու հարցում:

Վերջապես չքավորների դրությունը բարելավելու համար կռիվ մղելով մասնավորի, ձեռնարկողի ու

մենավաճառի դեմ, Խորհրդային յերկրի արդյունաբերական կոոպերացիան սուր կերպով տարբերվում է Արևմտայեվրոպական կապիտալիստական յերկրների կոոպերացիայից: Նա մտցնում է կյանքի մեջ ու գործնականորեն իրագործում բոլոր այն հիմնական խնդիրները, վոր դրված են նրա առաջ բանվոր դասակարգի ու նրա կուսակցության կողմից:

Այս բոլորը միասին վերցրած ստացվում է այն ճանապարհը, վորով արդյունաբերական կոոպերացիան, կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ, տանում է տանյակ ու հարյուր հազարավոր չարքաշ տնայնագործ մարդկանց—դեպի սոցիալիզմի կառուցման գործը: Ունենալով ներկայումս մոտ կես միլիոն համախմբված տնայնագործներ, արդյունաբերական կոոպերացիան շարունակ աճում ու զարգանում է և ընդգրկում կոոպերացիայի չենթարկված տնայնագործների լայն խավեր:

Արդյունաբերական կոոպերացիան աշխատելով տնայնագործների համախմբման գործում, չը նայած իր ջահել հասակին, կարողացել է ձեռք բերել հաջողություններ ու ստեղծել է խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ: Արդեն մեկ տասնիակ չէ այն գործարանների թիվը, վորոնք իրենց շշակների սուլոցով ավետում են ամենքին, վոր Վ. Ի. Լենինի կոոպերացիայի հանձարեղ ծրագիրը անց է կենում կյանքի մեջ:

«Կոոպերատիվային քաղաքականությունը, հաջողության ղեպքում, բարձրացնում է մանր տնտեսու-

թյունը և հեշտացնում նրա անցնելը... դեպի խոշոր արտադրությունը, կամավոր համախմբման հիմունքներով» (Լենին «Կոոպերացիայի մասին» հ. XVIII, մ. 1, յեր. 220):

Այս խոսքերով եր վերջացնում Վ. Ի. Լենինը յուր հողվածը կոոպերացիայի մասին: Մենք կարող ենք հաստատ կերպով ասել, վոր այս քաղաքականության հաջողությունը արդեն կատարված փաստ է մեր առաջ: Արդյունաբերական կոոպերացիան արդեն սկսել է մանր տնտեսություններից անցնել խոշոր արտադրության: Ուղիղ է—այս սկիզբը ունի և յուր խոշոր ղեկավարությունները: Այսպիսի ղեկավարություններ ապագայում շատ կը լինեն—ինչպես ներքին աշխատանքի կողմից, նույնպես և արտաքին հանգամանքների պատճառով:

Խորհրդային իշխանության պաշտպանությամբ, բարելավելով արտելային կոոպերատիվների դրությունը, արդյունաբերական կոոպերացիան կդառնա սոցիալիստական շինարարության գործի մեջ իսկական մասնակցող:



2013

« Ազգային գրադարան

9825



NL0044718



ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

9532